ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 ապրիլի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

57
(2907)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԸ ԴԺԳՈՀԵԼՈՒ ՏԵՂ ՉՈՒՆԵՆ

«Ինչ ցանել ես, այն էլ կհնձես»... ժողովրդական այս ասացվածքն այսօր, ավելի քան երբեւէ, արդիական է, հատկապես՝ ՔՊ-ի դեպքում:

Երեկ Ծիծեռնակաբերդում վարչապետի տիկնոջը՝ Աննա Հակոբյանին, եւ նրանց կրտսեր դստերը տհաճ դիմավորելն ու ընդունելությունը իրարանցում էր առաջացրել իշխող թիմում:

Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ գրեթե բոլոր ՔՊ-ականները շտապեցին իրենց սոցիալական էջերում աջակցել, իսկ որոշ պատգամավորներ՝ քծնել Աննա Հակոբյանին ու դատապարտել տեղի ունեցած միջադեպը՝ որակելով այն անարգանք:

Մանկահասակ երեխայի ներկայությամբ ցանկացած նման արարք, անխոս, դատապարտելի է. բայց, թերեւս, արժե թարմացնել ՔՊ-ականների հիշողությունը եւ նրանց միտը բերել, որ երեկվա դեպքը իրենց՝ դեռեւս 2018թ.-ին ցանած «սերմերի» ծիլերն են:

Թերեւս փաստ է, որ մարդկանց ընտանիքներ թիրախավորելու արատավոր բարքը հասարակական դաշտ բերել են «թավշյահեղափոխականները»՝ Փաշինյանի գլխավորությամբ. երբ դագաղներով եւ ծաղկեպսակներով գնում էին մարդկանց տներ, կամ անվանական սեւ ժապավեններ էին կապում նրանց բնակարանների մոտ:

Հիշենք ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովի դստեր՝ Նարե Շարմազանովայի դիմում-նամակը, որտեղ նա վրդովված դիմել էր թավշյահեղափոխականներին, եւ խնդրել էր դադարեցնել իր հոր նկատմամբ անվայելուչ պահվածքն ու վիրավորական արտահայտությունները: Բացի այս դեպքից, ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին նույն թավշյահեղափոխականները թիրախավորեցին, երբ վերջինս իր թոռան հետ զբոսնում էր Ազատության հրապարակում:

Ի վերջո, չմոռանանք նաեւ, որ ինչպես Ծիծեռնակաբերդը, այնպես էլ Եռաբլուրը հենց ՔՊ-ականներն ու նրանց աջակիցներն են բազմիցս վերածել քաղաքական հարթակի, երբ, իրենց ղեկավարին, սրբություն համարվող այս վայրերում, դիմավորում էին «Նիկոլ վարչապետ» վանկարկումներով եւ ծափահարություններով:

Այս ամենից հետո ՔՊ-ականները, թերեւս, երեկվա դեպքից դժգոհելու տեղ չունեն. ինչ ցանել են, այն էլ հնձում են:

«Ժողովուրդ» օրաթերթին բացառիկ տեղեկություններ են հասել, թե քննչական կոմիտեի Շենգավիթի բաժնում խոշտանգման ենթարկված Սիսիանի բաժնի նախկին պետ Գարիկ Մուրադյանին որ քրեական գործով են փորձել հարցաքննել: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ նրան քննչական բաժին են հասցրել 36 կգ ոսկու, 293 միլիոն ՌԴ ռուբլու հափշտակման առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում: Ասել է թե՝ այդ արտասովոր գործով աղմկահարույց հարցաքննությունները շարունակվում են: Գրել էինք, որ քննչական կոմիտեն քրեական գործի շրջանակում վկայի կարգավիճակում հարցաքննել է Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արշակ Պետրոսյանին: Ավելին՝ քրեական վարույթով, իրավապահների տեսադաշտում է հայտնվել նաեւ «օրենքով գողի» փեսան: Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն պաշտոնապես հայտնել էր, որ ապրիլի 10-ին «Պորշ» մակնիշի ավտոմեքենայով հետապնդել են «Հունդայի Սոնատա» մակնիշի ավտոմեքենային, եւ ժամը 07:15-ից մինչեւ 07:20-ն ընկած ժամանակահատվածում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մայրաքաղաքային փողոցի դիմաց արհեստական խոչընդոտ ստեղծելով՝ մեքենայի դիմացի աջ դռան պատուհանից զենքի գործադրման սպառնալիքով կանգնեցրել են նշված ավտոմեքենան: Կանգնեցնելուց հետո՝ ենթադրյալ հանցագործությունը կատարած անձինք ԱԱԾ աշխատակիցների համազգեստին նմանվող համազգեստով եւ դիմակավորված, դուրս գալով ավտոմեքենայից՝ ներկայացել են իբրեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցներ, եւ ավտոմեքենայում գտնվող 3 անձի նկատմամբ զենքի կիրառմամբ բռնություն գործադրելով՝ նրանց դուրս են բերել ավտոմեքենայից, թմրամիջոց ու այլ արգելված իրեր փնտրելու եւ նրանց ձերբակալելու պատրվակով՝ ձեռքերին անցկացրել են ձեռնաշղթաներ, ապա ավտոմեքենայից հափշտակելով առանձնապես խոշոր չափի՝ 36 կգ քաշով 999 հարգի ոսկյա ձուլակտորները եւ 293.000.000 ՌԴ ռուբլի գումարի պարունակությամբ պայուսակները դիմել են փախուստի:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «ՀՀ գլխավոր դատախազությունը օրերս պաշտոնապես հայտնեց, որ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Արմեն Մուրադյանը փոխադրվել է Տավուշի մարզի դատախազի պաշտոնին: ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի քրեական գործով մեղադրող դատախազ Արմեն Մուրադյանը նշանակվել է Տավուշի մարզի դատախազ: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ ունեցվածք էր հայտարարագրել Մուրադյանը՝ Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազի պաշտոնում պաշտոնավարելու ընթացքում: Այսպիսով՝ 2021 թվականին նա ձեռք է բերել բնակարան Երեւանի Արաբկիր վարչական շրջանում. այլ անշարժ գույք դատախազը չի հայտարարագրել: Հայտարարագրում առկա տվյալներից հասկանում ենք, որ 2018 թվականին Մուրադյանը ձեռք է բերել 2015 թվականի արտադրության Toyota մակնիշի մեքենա: Մուրադյանի բանկային հաշիվների մնացորդները, 2022 թվականի հայտարարագրի համաձայն, կազմել են 734 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 4 մլն 200 հազար դրամ: Արմեն Մուրադյանը 2022 թվականին ունեցել է 13 մլն դրամ եկամուտ, որից 11 մլն 367 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Դատախազությունից, իսկ 2 մլն 318 հազար դրամը՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից: Նրա՝ ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 41 մլն 563 հազար դրամ, որը բազմաբնակարան շենքում ձեռք բերված բնակարանի հիփոթեք է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Ուսումնասիրելով Գուրգեն Արսենյանի «Միավորված աշխատանքային կուսակցության» 2023թ. հաշվետվությունը՝ տեսնում ենք դատարկ սյունակներ, զրո դրամի շարժ եւ նմանատիպ այլ չլրացված թղթեր: Միայն փաստաթղթի առաջին էջում նկատվում է կուսակցության 1180 աշխատակցի մասին տեղեկություն, որով էլ, եթե հանկարծ Արսենյանը մի օր դառնա ՔՊ-ին ընդդիմադիր, իշխանությունը անմիջապես վարույթ կհարուցի՝ պարզելու, թե 1180 աշխատակիցը ո՞նց կարող էին չվարձատրվել: Ամեն դեպքում, Արսենյան-ՔՊ ալյանսը փորձառու բիզնեսմենին դեռեւս էական ոչինչ չի տվել: Կարելի է փաստել, որ Գուրգեն Արսենյանի աստեղային ժամը, այնուամենայնիվ, նախկիններին ժամանակ էր:

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

«ՎԵՐՋԻՆ ԿԱԹԻԼԸ ԼՑՎԵԼ Է». Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Երեկ՝ ապրիլի 24-ին, Հանրապետության հրապարակում բողոքի ակցիա էր ընթանում, որին մասնակցում էին Վարդան Ղուկասյանի, Միհրան Պողոսյանի եւ Արշակ Կարապետյանի «Համահայկական ճակատ» շարժման աջակիցները: Ակցիայի մասնակից, Երեւանի ավագանու անդամ Նանա Սարգսյանի հետ ArmLur.am-ը զրուցել է բողոքի ակցիայի եւ Տավուշում ստեղծված վերջին իրադարձությունների մասին:

-Տիկին Սարգսյան, չնայած, որ արդեն մի քանի օր է,ինչ քաղաքացիները դուրս են եկել փողոց եւ թե՛ մարզերում, թե՛ Երեւանում ակցիաներ են իրականացնում, բայց իշխանությունները, այնուամենայնիվ, իրենց օրակարգով են շարժվում, եւ, ինչպես տեսնում ենք, սահմանազատման գործընթացն արդեն սկսվել է: Ի՞նչ կասեք այս առիթով:

-Գիտեք, դա այն երեւույթից է բխում, որ ժողովուրդը լիարժեք չի ներկայացնում իր խնդիրը, պահանջը, երբ որ կարթնանա ժողովրդի մեջ վերջին կաթիլը լցվելու զգացողությունը, որը, կարծում եմ վաղուց լցվել է, ժողովուրդն արդեն պետք է որ սկսի ավելի ռադիկալ քայլեր անել: Ես նշել եմ՝ ավելի կտրուկ քայլերի պետք է գնանք: Կտրուկ ասելով՝ նկատի չունեմ, թե ներքին կռիվներ ու խժդժություններ եմ ցանկանում հրահրել, բոլորովին, անգամ ոստիկանները,որ հիմա աչալուրջ ցույցին են հետեւում, նրանք էլ են հայ եւ մեզնից մեկը. ասածիս նպատակն այն է, որ մենք պետք է համախմբվենք, եւ ամենակարեւորը, որ ոչ մի դեպքում պետք չէ այս ակցիաները կուսակցական հավաքներ դարձնել, վերածել կուսակցական մանր խնդրի. ո՛չ, սա ինքնաբուխ, ժողովրդի կողմից կազմակերպված բողոքի ակցիա է՝ դժգոհություն, որը պատշաճ կերպով արտահայտվում է: Մեր երկիրը մասնատել են կտոր-կտոր, եւ բաժանում են, իսկ դրա դեմ կանգնելու համար պետք է լինենք համախմբված եւ մեկ բռունցք դառնանք: Թերեւս այսպես պատասխանեմ:

-Տիկին Սարգսյան, այստեղ հավաքված են նաեւ մի խումբ քաղաքացիներ, որոնք եկել են Վարդան Ղուկասյանի կոչով, նրա աջակիցներն են: Եթե չեմ սխալվում, Դուք «Հանրային ձայն» խմբակցությունից դուրս եք եկել, հիմա ինչպե՞ս ստացվեց, որ նրա կոչով այսքան մարդիկ հավաքվեցին:

-Ես լրագրող եմ, հասարակական եւ քաղաքական գործիչ, եւ ես, լսելով Վարդան Ղուկասյանի կոչը ու նաեւ իմ հոգու կանչը, այստեղ եմ: Ես ամեն օր շարունակաբար ասում եմ՝ պետք է վերջ դրվի այս ամենին, պիտի հավաքվենք ու այս հարցին լուծում տանք: Ի՞նչ կերպով, ի՞նչ կստացվի, Աստված գիտի, բայց ես, այո՛, այստեղ եմ՝ չնայած այն փաստին, որ այլեւս խմբակցությունում չեմ:

-Տիկին Սարգսյան, բայց, ըստ Ձեզ, նման ակցիաներով հնարավո՞ր է ինչ-որ արդյունքի հասնել:

-Այո՛, հնարավոր է:

-Չէ՞ որ վաղուց տարբեր շարժումներ էին իրականացվում, որոնք արդյունք չտվեցին:

-Վաղուց իրականացվող շարժումները եղել են միտումնավոր. գալիս էին, մարդկանց հավաքում, եւ իրենք գնում էին տուն ու մարդկանց էլ ասում՝ տուն գնան: Ասում էին թե. «Գնանք ժողովուրդ ջան, ցրտերն ընկան, ամռանը կգանք»: Վրաններրոբ հաստատվեցին, ես իրենց հետ հավասար այդ ակցիաներին մասնակից եմ եղել, բայց միտումնավոր գալիս էին եւ այդ ակցիաներին վերջ դնում: Կարծում եմ՝ այստեղ նման մարդիկ չեն գտնվի եւ այստեղի մասնակցիները չափազանց աչալուրջ են:

-Կա՞մ այստեղ հավաքված քաղաքացիների մոտ ծրագիր:

-Ծրագիրը մեկն է՝ համախմբվել եւ փրկել երկիրը ներկայիս ռավիճակից:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՄԻՋԱԴԵՊ՝ ՃԻՃԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Ճիճեռնակաբերդի հուշահամալիր է այցելել վարչապետ Նիկոլ Փաշինյանի կինը՝ Աննա Հակոբյանը՝ փոքր դստեր հետ:

Անմար կրակի մոտ քաղաքացիները, տեսնելով նրան, սկսել են վանկարկել՝ «Նիկոլ դավաճան», «Նիկոլ հողատու, «Նիկոլ ցեղասպան»:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ՔՊ-ում կատարվածը խիստ ծանր են տարել, որ վարչապետի դստեր ներկայությամբ է եղել դեպքը ու երեխան կատարվածից հուզվել է: Ավելին՝ ՔՊ-ում քննարկվել է, որ վարչապետի կնոջը եւ դստերը թիրախավորել են «Ազգային ժողովրդական բեւեռի» անդամները ու նրանց վարքը որակել են որպես սանձարձակություն:

ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՔՎԻ ԲԱՆՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԵՐԻՆ

Այս տարի՝ Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցին, Ճիճեռնակաբերդի բարձունքում կարելի էր տեսնել պաստառներ՝ «Պահանջում ենք անհապաղ ազատ արձակել Բաքվի հայ գերիներին», «Չի կարող լինել խաղաղության համաձայնագիր՝ առանց հայ գերիների ազատ արձակման», «Ո՛չ մի COP29 Ադրբեջանում՝ առանց հայ գերիների ազատ արձակման», «Գլոբալ լռություն, Գլոբալ ամոթ. Ո՛չ՝ ցեղասպանությանը» գրություններով եւ Բաքվի բանտում ապօրինի պահվող երկու տասնյակից ավելի հայ գերիների լուսանկարներով:

Այս պաստառները կրում էին Բաքվի բանտում ապօրինի պահվող Ռուբեն Վարդանյանի ընկերների նախաձեռնությամբ կազմակերպված բազմամարդ երթի մասնակիցները: Ցեղասպանության տարելիցի օրը նրանք ոչ միայն հարգանքի տուրք էին մատուցում միլիոնավոր անմեղ նահատակների հիշատակին, այլեւ իրենց զորակցությունը հայտնում հայ գերիներին եւ ապրիլի 5-ից բոլոր հայ բանտարկյալներին անհապաղ ազատ արձակելու պահանջով հացադուլ հայտարարած Ռուբեն Վարդանյանին:

«Այսօր մենք ոգեկոչում ենք Ցեղասպանության նահատակների հիշատակը ու միաժամանակ մեր այս ակցիայով փորձում ենք աշխարհի ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ Բաքվի բանտերում ունենք ապօրինի պահվող բանտարկյալներ, որոնցից մեկը՝ Ռուբեն Վարդանյանը շուրջ 20 օր գտնվում է հացադուլի մեջ: Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները պետք է արձագանքեն, գործի դնեն ճնշման մեխանիզմներ, քանի որ ապօրինի ձերբակալված եւ ավտորիտար երկրում որպես պատանդ պահվող հայ գերիների հարցը նաեւ քաղաքակիրթ աշխարհի հարցն է: Գիտենք, որ ընտանիքն ու հարազատները մտահոգված են նրա վիճակով եւ պահանջում են, որ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն անհապաղ կերպով այցելի նրան: Այս քայլով մենք եւս միանում ենք այդ պահանջին ու նաեւ Ռուբեն Վարդանյանի՝ բոլոր հայ բանտարկյալներին անհապաղ ազատ արձակելու պահանջին»,-նշել է ակցիայի կազմակերպիչ Ռուբեն Հայրապետյանը:

Երթի մասնակիցների պաստառներից մեկին էլ Բաքվի բանտից Ռուբեն Վարդանյանի ընտանիքի միջոցով փոխանցած ուղերձն էր՝ «Արժեքներն ու սկզբունքներն առավել կարեւոր են, քան նույնիսկ կյանքը»:

«ԱՐԻՈՒԹՅԱՆԸ ՎԱԽԿՈՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻ ԽԱՌՆԵՔ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Ճիճեռնակաբերդի հուշահամալիր՝ ոգեկոչելու հիշատակը Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների:

Ծաղկեպսակի զետեղումից հետո հուշահամալիրում՝ անմար կրակի առջեւ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսական կարգ:

Լրագրողների հետ զրույցում Վեհափառ Հայրապետն ասաց. «Հայոց ցեղասպանության մեր սուրբ նահատակների այս նվիրական սրբավայրից մեր պատգամն ենք բերում մեր ժողովրդին»:

«ՍԳՈՒՄ ԵՆՔ...» ՌԴ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեւանում Ռուսաստանի դեսպանությունը Telegram-ում հայտարարել է, որ հայ ժողովրդի հետ միասին սգում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը:

«Ապրիլի 24-ը Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն է, մենք սգում ենք հայ ժողովրդի հետ միասին»,- ասվում է դիվանագիտական առաքելության Telegram ալիքում:

Հիշեցնենք, որ 1995 թվականին Պետդուման ընդունել է «1915-1922 թվականներին հայ ժողովրդի ցեղասպանությունը իր պատմական հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում դատապարտելու մասին» բանաձեւը:

ԱՆՊԱՅՄԱՆՈՐԵՆ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՆՔ ՄԵՋՔՆԵՐՍ

ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը սոցցանցի իր էջում գրում է. «Սիրելի՛ հայրենակիցներ, աշխարհասփյուռ հայեր, 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը վառ է մեր սրտերում եւ մենք աղոթում ենք նրանց հոգիների հանգստության համար:

Խոնարհվում եմ մեր բոլոր սուրբ նահատակների հիշատակի առաջ եւ ուզում եմ հավատալ, որ պատմական արդարությունը մի օր անպայման վերականգնվելու է, քանզի ցեղասպանությունը չի կարող ունենալ վաղեմության ժամկետ:

Այսօր՝ համահայկականության եւ միասնականության այս խորհրդանշական օրը, մենք հիշում ենք Ցեղասպանության զոհերին, սգում ենք, բայց եւ հաստատակամ հայտարարում ենք, որ մեր կամքն անկոտրում է: Մենք անպայմանորեն ուղղելու ենք մեջքներս եւ կառուցելու ենք ուժեղ, զարգացող եւ ժամանակակից Հայաստան: Մեզ անհրաժեշտ է ներքին հաշտություն ու համահայկական բոլոր ռեսուրսների համախմբում:

Աստված պահապան՝ մեզ բոլորիս...»:

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԵՆ ՏԵՂԱՓՈԽԵԼ

Երեկ ձերբակալված Տավուշի շարժման առաջնորդներից Սուրեն Պետրոսյանին տեղափոխել են Երեւան. հայտնում է «Տավուշը հանուն հայրենիքի» ֆեյսբուքյան խումբը:

Նրա դեմ քրեական գործ է հարուցվել «խուլիգանություն» հոդվածով:

Հիշեցնենք, որ երեկ Տավուշում վարչապետ Փաշինյանի՝ Ադրբեջանի հետ սահմանազատման շուրջ պայմանավորվածությունների դեմ ցույցի մասնակիցներին բիրտ ուժի կիրառմամբ բերման են ենթարկել:

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ ՇԻՆԾՈՒ ԵՆ

Սուրեն Պետրոսյանը քաղբանտարկյալ է, նրա նկատմամբ այն, ինչ իրականացվում է, բացառապես քաղաքական պառճառներ ունի եւ Նիկոլ Փաշինյանի ուղիղ հրահանգով են նրան այստեղ բերել: Այս մասին երեկ՝ ապրիլի 24-ին, Ձերբակալվածների պահման վայրում «Հայկական պետականության համար» համակարգող կենտրոնի հիմնադիր, քաղաքագետ Սուրեն Պետրոսյանին տեսակցելուց հետո ասել է ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

Նա նշել է, որ Սուրեն Պետրոսյանը մի խումբ մարդկանց հետ առաջնորդում էր Տավուշում շարժումը, դրա համար մեկուսացման անհրաժեշտություն կար:

«Այն հոդվածները, որոնք առաջադրվել են Սուրեն Պետրոսյանին, գոյություն չունեցող, շինծու հոդվածներ են, քանի որ Սուրեն Պետրոսյանը որեւէ արարք չի գործել: Նա կանգնած է եղել փողոցում, ինչպես հայուրավոր այլ քաղաքացիներ, ուղղակի իրեն անմիջապես մեկուսացրել են ոստիկանապետի տեղակալ Հակոբյանի ուղիղ հրամանով եւ ուղիղ մասնակցությամբ»,- ասել է Թագուհի Թովմասյանը:

Նրա խոսքով, Ս.Պետրոսյանը կոչ է անում տավուշցիներին եւ իր պայքարի ընկերներին շարունակել պայքարը եւ շարունակել հայրենքի հանձնման դեմ բոլոր գործողություններով ցույց տալ հանրության լայն կոնսոլիդացիա, թե ինչպես չի կարելի հանձնել ՀՀ տարածքները:

«Ինչքան էլ նրանք փորձեն ներկայացնել որպես ադրբեջանական տարածքներ, դրանք ՀՀ վարչական տարածքներ են, որոնք Փաշինյանը միակողմանի զիջում է:

Հենց այդ անթույլատրելիության դեմ է ընդվզումը, որը կազմակերպվել ու ինքնաբուխ տեղի է ունեցել Տավուշում: Այս ամենի դեմ էր Սուրեն Պետրոսյանի պայքարը եւ այդ պայքարն այս դեպքում ավարտվեց ձերբակալությամբ: Հույս ունեմ կալանքի չի հասնի, բայց 72 ժամ ձերբակալությունն ակնհայտորեն ունի քաղաքական մեկ նպատակ՝ բանտարկել Սուրեն Պետրոսյանին, պահել գերության մեջ, որպեսզի Տավուշում հնարավոր զարգացումները, ընդվզումները հնարավոր լինի կանխել», - նշել է պատգամավորը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏՐՎԵԼ Է ՍԴ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Դատավորների ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքներով՝ ՍԴ դատավորի թեկնածու է ընտրվել դատավոր Դավիթ Խաչատուրյանը: Քվեարկությանը մասնակցել է 260 դատավոր: Նրանցից 126-ը քվեարկել է թեկնածուներից Արսեն Նիկողոսյանի օգտին, իսկ 131 ձայն գրանցվել է Դավիթ Խաչատուրյանի օգտին:

Նշենք, որ Դավիթ Խաչատուրյանը ԲԴԽ անդամ է եղել, միայն ամիսներ առաջ է ընտրվել որպես Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր եւ այժմ էլ, փաստորեն, հավակնում է Սահմանադրական դատարանի դատավոր դառնալ: Մինչ այս՝ փետրվարի 2-ին, ՍԴ դատավորի թեկնածուի ընտրության օրակարգով եւս մեկ ժողով էր հրավիրվել: Այդ ժամանակ եւս Խաչատուրյանն առաջադրել էր իր թեկնածությունը, սակայն դատավորներն ընտրել էին Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Բալայանին: Վերջինս, սակայն, ՍԴ դատավոր չի դարձել, քանի որ Ազգային ժողովում ՍԴ դատավորի ընտրության հարցով քվեարկությանը՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ամբողջ կազմով չի մասնակցել. թե այս թեկնածուի՝ Դավիթ Խաչատուրյանի ընտրության դեպքում ԱԺ-ում ինչ զարգացումներ կլինեն, դեռեւս հայտնի չէ, բայց, դատելով այն հանգամանքից, որ Խաչատուրյանին որպես Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Ազգային ժողովն է ընտրել, կարելի է ենթադրել, որ նա մեծ շանսեր ունի՝ ԱԺ-ի կողմից ընտրվելու: Ավելին՝ Դավիթ Խաչատուրյանը հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրն է:

Իրավիճակը մեկն է, որ ըստ էության՝ դատական իշխանության թեկնածուին իշխանությունը մերժում է: Զրուցեցինք փաստաբան Հասմիկ Հարությունյանի հետ, ինչի ի ատասխան նա ստեղծված իրավիճակին ի պատասխան հայտնեց.«Իրապես ժողովրդավար պետությունը չի կարող գործել առանց պետական մարմինների միջեւ ձեւավորված զսպիչների եւ հակակշիռների: Իշխանության իրականացումը տրված է տարբեր պետական մարմիններին, ինչը պահանջում է նաեւ վերջիններիս միջեւ կոորդինացում: Այս համատեքստում զսպիչները եւ հավասարակշռությունը պահանջում են կառուցողական համագործակցություն հանրային շահերին հասնելու համար, դրանք պահանջում են նաեւ փոխադարձ հարգանք նաեւ տարբեր իշխանության թեւերի պատկանող մարմինների միջեւ ՝ որպես վերջիններիս միջեւ համապատասխան հավասարակշռություն եւ փոխադարձ վերահսկողություն ապահովելու միջոց. այս մոտեցումը ընդունված է նաեւ Վենետիկի հանձնաժողովի կողմից:

Սա կարելի է լավագույնս դիտարկել դատական եւ օրենսդիր իշխանության առնչությամբ՝դատավորների ընդհանուր ժողովին տրված իրավասությունների համատեքստում: Մասնավորապես՝ օրենսդիրը Դատական օրենսգիրք Սահմանադրական օրենքով սահմանել է, որ Դատավորների ընդհանուր ժողովը դատավորների ինքնակառավարման մարմին է, նույն օրենքով տրված են նաեւ վերջինիս իրավասությունները:

Առանձին կարեւոր իրավասություններից է Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու ընտրելն ու Ազգային ժողովին առաջարկելը, ինչը հենց վերը նշված զսպիչների եւ հակակշիռների ապահովման միջոցներից մեկն է:

Այսինքն, դատական իշխանությունը ի դեմս Ընդհանուր ժողովի իրավունք է ստացել մասնակցել եւ կարեւոր դերակատարում ունենալ Սահմանադրական դատարանի անդամների ընտրության գործին: Մինչդեռ, օրենսդիր մարմնի կողմից Ընդհանուր ժողովի կողմից ընտրված թեկնածուներին ինչ-ինչ պատճառներով մերժելը ոչ միայն Ընդհանուր ժողովի ձայնը լռեցնում է, այլ խախտում է զսպիչների եւ հակակշիռների նկարագրված սկզբունքը: Արդյունքում, թեկնածուի վերջնական ընտրությունը օրենսդրի բացառիկ, երբեմն նաեւ կամայական հնարավորությունն է դառնում»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԵՏՔ Է ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ

«Մեր պետությունն այս պետությունն է, սակայն կորցրած հայրենիքի սխալներից պետք է դասեր քաղել».- եւ այսօր այդ դասերը քաղելու օրերից մեկն է: Այս մասին, երեկ՝ ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդի հուշահամալրում լրագրողների հետ զրույցում նշել է «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ հատուկ հանձնարարությունների նախկին դեսպան Էդմոն Մարուքյանը:

Նա խնդիր է տեսնում հայտարարության մեջ, որտեղ ասվում է, որ պետք է հավաքել ցեղասպանության 1,5 մլն զոհերի անուն-ազգանունները. «Սա պրոբլեմատիկ խոսույթ է: 1,5 մլն զոհերի անուն-ազգանունները փնտրելը, ըստ էության,կասկածի տակ դնող թեզ է, հետեւաբար, դա պետք է ամեն կերպ արգելել: Դա բավականին երկար ժամանակ Թուրքիայի կողմից լոբբինգ արվող թեզ է, որ եկեք պատմաբանների հանձնաժողով ստեղծենք, իրենց արխիվը, որտեղ արդեն բնականաբար, ոչ մի բան չկա, բացենք, եւ կտեսնեք, որ չի եղել Ցեղասպանություն: Ցանկացած մեկը, որ կմտնի այդ լոբբինգի մեջ, կսկսի փնտրել 1,5 մլն հայերի անուն-ազգանունները, նա տրվելու է Թուրքիայի օրակարգին, վերջում հանգելով նրան, որ ցեղասպանության եղելության հարցը դնելու է կասկածի տակ»,-ասել է Մարուքյանը:

ՈՒՐԱՑՈՂԸ ՆՋՈՎՔԻ Է ԵՆԹԱԿԱ

Տավուշի մարզի Կիրանց գյուղում քաղաքացիները շարունակում են փակ պահել դեպի Վրաստան գնացող ճանապարհը: Արդեն քանի օր է բողոքող քաղաքացիների հետ է Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը:

«Եթե որեւէ մեկն ուրանալու է մեր նահատակների արյունը եւ այդ գինը, նա պարզապես նզովքի ենթակա է, ուրիշ տարբերակ եւ ճանապարհ չկա: Սա Հայ եկեղեցու էությունն է, բնությունն է:

Մենք ինքնության ոչնչացման գործընթացին ենք ականատես լինում, եւ այդ ինքնության կրողն իր բովանդակությամբ թե՛ մշակութային իմաստով, թե՛ հոգեւոր իմաստով, մնացել է հայ եկեղեցին, եւ սա բնական արտահայտություն է, ոչ թե արհեստական ձեւակերպված կամ քաղաքական ենթատեքստով արտահայտություն»,-ասաց Բագրատ Սրբազանը՝ անդրադառնալով Ցեղասպանության հուշահամալիրում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Արշակ արքեպիսկոպոս Խաչատրյանի խոսքին:

ԾԱՆՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այս տարի՝ Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցին Ծիծեռնակաբերդի բարձունքում կարելի էր տեսնել պաստառներ՝ «Պահանջում ենք անհապաղ ազատ արձակել Բաքվի հայ գերիներին», «Չի կարող լինել Խաղաղության համաձայնագիր՝ առանց հայ գերիների ազատ արձակման», «Ոչ մի COP29 Ադրբեջանում՝ առանց հայ գերիների ազատ արձակման», «Գլոբալ լռություն, Գլոբալ ամոթ. Ոչ՝ ցեղասպանությանը» գրություններով եւ Բաքվի բանտում ապօրինի պահվող երկու տասնյակից ավելի հայ գերիների լուսանկարներով:

Այս պաստառները կրում էին Բաքվի բանտում ապօրինի պահվող Ռուբեն Վարդանյանի ընկերների նախաձեռնությամբ կազմակերպված բազմամարդ երթի մասնակիցները:

ՎԱՐՈՒՅԹ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Լեւոն Հրաչյայի Սարգսյանի եւ Սուրեն Կոյունի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

ՀՀ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանի՝ «Ալրաղացի Լյովիկի» գործով դիմում է ներկայացրել Վճռաբեկ դատարան: Մասնավորապես, Գլխավոր դատախազը բողոք է ներկայացրել Լեւոն Սարգսյանի եւ Սուրեն Ղազարյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի սեպտեմբերի 5-ի որոշման դեմ: Ա.Վարդապետյանի վճռաբեկ բողոքն ընդունվել է Վճռաբեկ դատարանի վարույթ եւ բողոքի քննությունն իրականացվելու է գրավոր ընթացակարգով:

Իսկ ինչ որոշում է կայացրել ՀՀ վերաքննիչ դատարանը ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանի՝ «Ալրաղացի Լյովիկի» դեմ հարուցված քրեական գործով:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Լեւոն Սարգսյանի պաշտպան Դավիթ Հունանյանը հայտնել էր, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը բավարարել է իր բողոքը եւ բեկանել առաջին ատյանի դատարանի որոշումը, որով դատարանը Լեւոն Սարգսյանին ազատազրկման էր դատապարտել 9 տարի ժամկետով եւ քրեական գործը ուղարկել առաջին ատյանի դատարան՝նոր քննության:

Գլխավոր դատախազությունն էլ հենց այս որոշումն է բողոքարկում դատարան:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննված քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա՝ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Լեւոն Սարգսյանին, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ վերջինս իր մտերիմ Ա. Կ.-ի եւ ՀՀ ոստիկանության նախկին աշխատակից Ա. Ն.-ի միջոցով կազմակերպել է 2008թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԿԱ մաքսային կոմիտեի նախկին ղեկավար Արմեն Ավետիսյանի նկատմամբ հանցավոր համագործակցության կողմից առանձնապես խոշոր չափերով՝շուրջ 45 միլիոն ՀՀ դրամ արժեքով գույքի հափշտակություն կատարելու նպատակով իրականացված ավազակային հարձակումը:

Նույն հանցագործությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակով օժանդակելու համար մեղադրանք է առաջադրվել նաեւ Լեւոն Սարգսյանի ազգական Սուրեն Ղազարյանին: Քրեական գործի նախաքննության ընթացքում Լ. Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը, եւ նա մինչ օրս գտնվում է ԱԱԾ-ի մեկուսարանում: Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը «Ալրաղացի Լյովիկին» դատապարտել էր ազատազրկման՝ 9 տարի ժամկետով, իսկ նրա ազգական Սուրեն Ղազարյանին՝ 8 տարվա ազատազրկման:

Լեւոն Սարգսյանը դատարանի այս որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որտեղ էլ կայացվել է որոշում, եւ բեկանել են առաջին ատյանի դատարանի այս որոշումը. գործի քննությունը սկսել են նորից: Այս ընթացքում Լեւոն Սարգսյանը կմնա կալանքի տակ»:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԶՈՔԱՆՉԻՆ ԾԵԾԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԵՂԵԼ

Նախկին զինծառայող, ՊՆ փոխգնդապետը ձերբակալված պահման վայրում իրեն կյանքից զրկել է սավանի միջոցով: ՀՀ Քննչական կոմիտեից մեզ հայտնեցին, որ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնվել է քրեական վարույթ: Հանգամանքները պարզվում են:

Հիշեցնենք, որ SHAMSHYAN.com-ի տեղեկություններով ՝ ապրիլի 23-ին, առեղծվածային դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի բաժնի ձերբակալվածների պահման վայրի ոստիկանության ծառայողը ձերբակալվածների պահման վայրի խցերից մեկում կախված վիճակում հայտնաբերել է տղամարդու դի:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ ԶՊՎ-ում կախվածը նախկին զինծառայող է՝ ՊՆ փոխգնդապետ, ով օրեր առաջ դաժան ծեծի էր ենթարկել իր զոքանչին:

Մասնավորապես գրել էինք, որ ապրիլի 21-ին, առեղծվածային դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 12:00-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժնում եւ տեղեկություններ են ստացվել, որ Բալահովիտ գյուղի տներից մեկում վիրավոր քաղաքացի կա, ով գտնվում է ծայրահեղ ծանր վիճակում:

Ոստիկաններն ու պարեկները նշված գյուղի 14-րդ տան բակում հայտնաբերել են ամբողջությամբ արյան մեջ թաթախված, գլխի մասում վնասվածքներով տանտիրուհուն:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, ովքեր հրաժարվեցին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին. «Ճիշտն ասած՝ չենք իմացել՝ ինչ ա տեղի ունեցել: Մենակ էն տեսանք, որ պարեկները ավտոներով եկան, մտան էդ տուն, մի հոգու կանդալեցին ու տարան: Հետո պարեկներն իրանց ավտոմեքենայում եղած դեղատուփից բինտ ու բամբակ հանեցին ու տան բակում սկսեցին վիրավոր տատիկին օգնություն ցուցաբերել: Հետո եկան Աբովյանի ոստիկանները, ովքեր զանգեցին շտապօգնություն, ու սկոռին եկավ վիրավորին տեղափոխեց հիվանդանոց:

Մեզ հասած տեղեկություններով՝ նրան քարով մի քանի անգամ հարվածել է փեսան: Հենց իրան էլ լավա շուտ պարեկները բռնեցին, թե չէ կարողա տար ու սպաներ, բայց թե ոստիկաններն ու պարեկները որտեղից են դեպքի մասին իմացել՝ չգիտենք»:

ՏԱՆՈՒՄ ԵՆ ԿԱԼԱՆՔԻ

«Ժողովուրդ» օրաթերթին Քննչական կոմիտեից հայտնեցին,որ 2024 թվականի ապրիլի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 264-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձերբակալված անձանցից մեկին ներկայացվել է մեղադրանք՝ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Որպես խափանման միջոց՝կալանքն ընտրելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել դատարան: Մյուս 6 անձինք ձերբակալվածի կարգավիճակ ունեն: Դեպքի բոլոր հանգամանքները քննության առարկա են՝միջադեպի բոլոր մասնակիցների արարքներին իրավական գնահատականներ տալու նպատակով:

Հանձնարարություն է տրված ԱԱԾ-ին եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանությանը՝ դեպքին մասնակից անձանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու վերաբերյալ:

Էջը՝ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

5 ԱՆՁ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ՔԿ

Երեկ Տավուշում իրավիճակը թեժ էր, բողոքի ակցիայի ժամանակ 13 քաղաքացու են ձերբակալել: Քիչ առաջ ՆԳՆ-ից մեզ հայտնեցին, որ 5 անձի, որոնց մեջ է նաեւ Տավուշի շարժման առաջնորդներից Սուրեն Պետրոսյանը, ներկայացրել են քննչական բաժին, իսկ 8 անձին ազատ են արձակել:

Հիշեցնենք, որ Տավուշում բողոքի ակցիաների ժամանակ տարբեր կասկածանքներով ձերբակալված էին 10 անձ, որոնց տեղափոխել էին Տավուշի մարզի ոստիկանության տարբեր բաժիններ:

Տավուշի շարժման առաջնորդներից Սուրեն Պետրոսյանի հետ ձերբակալել էին նաեւ Սիմոն Գիշյանին եւ Լեւոն Գրիգորյանին: Նրանք նույնպես Նոյեմբերյանի բաժին էին տարել:

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ

Գեղարքունիքի փոխմարզպետի որդու սպանության գործով կալանավորվածի հարազատը այսօր «Մակարով» տեսակի ատրճանակով ինքնասպան է եղել: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ կատարվածի մասով կա վկա, որը մահացածի հարազատն է, եւ նրա ներկայությամբ է դեպքը եղել:

2017 թվականի Գեղարքունիքի փոխմարզպետի որդու սպանությունից հետո արյունահեղությունները շարունակվում է խլում մարդկանց կյանքեր:

2017 թվականին Գեղարքունիքի փոխմարզպետի որդին՝Հայկ Հակոբյանը, սպանվել էր:

Հունվարի 7-ին՝ցերեկը՝ժամը 12:30-ի սահմաններում, «Տոյոտա լենդ քրաուզեր պրադո» ավտոմեքենայից կրակոցներ էին արձակվել «Աուդի-Q7» մակնիշի ավտոմեքենայի ղեկին գտնվող Հայկ Հակոբյանի գլխի եւ պարանոցի ուղղությամբ, ինչի հետեւանքով ստացած վնասվածքներից վերջինս հիվանդանոցի ճանապարհին մահացել էր. Հակոբյանի վրա 7 կրակոց էր արձակվել: Նշենք, որ մահացած Հայկ Հակոբյանը հանցագործ աշխարհում մեծ հեղինակություն համարվող Նորատուսցի եղբայրներ Ալիկ եւ Արա Բանդուրյանների քեռու տղան էր, իսկ հայրը աշխատում է Գեղարքունիքի փոխմարզպետ:

2019 թվականին Նոյեմբերի 2-ին վաղ առավոտյան Սեւան-Մարտունի ավտոճանապարհին հնչեցին կրակոցներ ,ինչի հետեւանքով սպանվեց նույն մարզի բնակիչ, 40-ամյա Գուրգեն Հակոբյանը: Բան այնէ, որ փոխմարզպետի որդու սպանության մեջ մեղադրվում է Մեխակ Հարությունյանը, որը սպանված Գուրգեն Հակոբյանի զարմիկն էր:

Մամուլում շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ այս դեպքը կապեցին քրեական հեղինակություն Նորատուսցի Ալիկի հետ, թե նա է կազմակերպել՝ցանկանալով վրեժխնդիր լինել իր մորեղբոր որդու՝ Հայկ Հակոբյանի սպանության համար:

Եվ ահա, 5 տարի անց՝ փոխմարզպետի որդու սպանությունից հետո, վրեժխնդրության արդյունքում սպանված Գուրգեն Հակոբյանի հայրը այսօր ինքնասպան է լինում, ինչը մեծ կասկածների տեղիք է տալիս:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 22-ից 23-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 113 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀԱՐՑԸ ԴԵՌԵՎՍ ՕԴՈՒՄ ԿԱԽՎԱԾ Է

2020թ. ամռանը Իջեւանի գինու, կոնյակի գործարանը առանց շինթույլտվության եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի (ՇՄԱԳ) գործարանի հարեւանությամբ. Աղստեւ գետի հունում կատարվել են մեծ ծավալի շինարարական աշխատանքներ, 700-800 մետր երկարությամբ գետի հունն ավերվել է, 1870 խորանարդ մետր ծավալով գետափի ժայռը վերացել է, Աղստեւի ափին կառուցվել է մեծ երկարությամբ բետոնե պատ, որի հետեւանքով Իջեւանի «Դենդրոպարկի» ջրառն ավերվել է, «Դենդրոպարկն» Աղստեւ գետից ոռոգման ջուր չի ստացել, պարկում շուրջ 60 տարում տնկված հազվագյուտ ծառերի եւ թփերի կեսը չորացել է: Բնապահպանական խախտումների համար Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի Տավուշի մարզային բաժինը Իջեւանի գինու, կոնյակի գործարանին տուգանել է 216 հազար դրամի, նաեւ՝ 350 հազար դրամի չափով: «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը դիմել է քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին՝ հարցնելով թե Աղստեւ գետի եւ Իջեւանի «Դենդրոպարկի» ջրառն ավերելու հետ կապված քրեական գործն ի՞նչ ընթացք ունի, ո՞վ է այդ գործով ներգրավված՝ որպես մեղադրյալ: Քննչական կոմիտեն պատասխանել է. «Տավուշի մարզի Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողը առանց ՀՀ ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու եւ կոնյակի գործարանին հանձնելու, եւ ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թվականի հոկտեմբերի 15-ին (08.04.2003 թվականին ընդունված եւ 01.07.2022 թվականին ուժը կորցրած) ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննության այս փուլում որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ»: Իրավապահ համակարգից տեղեկացանք, որ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունին, Իջեւանի «Դենդրոպարկին» պատճառված մեծ վնասները ճշտելու համար նշանակվել է փորձաքննություն: Իջեւանի «Դենդրոպարկի» նախկին տնօրեն Մեխակ Սայադյանը հայտնեց, որ վնասները հաշվարկելու համար շինարարության պատճառած վնասը ճշտող մասնագետ եւ «Դենդրոպարկի» ծառերին ու թփերին պատճառված վնասը ճշտող մասնագետներ են եկել, սակայն Հայաստանում շատ քիչ են հազվագյուտ, արժեքավոր ծառատեսակների գծով մասնագետները; Սայադյանն ասաց, որ «Դենդրոպարկին» ու Աղստեւ գետին պատճառված վնասների առթիվ հարուցված քրեական գործով 3 քննիչ է փոխվել. սակայն, ինչպես տեսնում ենք, քրեական գործն առաջ չի գնում, այլապես Իջեւանի գինու, կոնյակի գործարանի ղեկավարությանը մեղադրանք կառաջադրվեր:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՐՈՇՈՒՄ

Ց. ԱԿՈՊՅԱՆԻՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

«Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան»-ի նախկին դեկանի քրեական գործով որոշում է կայացվել:

Ցոլակ Արամի Ակոպյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հանդիսանալով կազմակերպչական-տնօրինչական եւ վարչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետեւ՝ նաեւ Համալսարան) սոցիալական գիտությունների եւ սերվիսի ֆակուլտետի /2018-2022թթ/ դեկան, ակնհայտորեն դուրս գալով իր լիազորությունների շրջանակից՝ ֆակուլտետի այլ դասախոսների կողմից դասավանդվող եւ իր կրթական ու մասնագիտական ոլորտից դուրս գտնվող՝ «Բանավոր խոսք անգլերեն», «Գրավոր խոսք անգլերեն», «1-ին օտար լեզու անգլերեն», «2-րդ օտար լեզու անգլերեն», «2-րդ օտար լեզու գերմաներեն», «Խոսույթի տեսություն», «Հայ գրականություն», «Հայոց լեզու», «Հայոց լեզու եւ հայ գրականություն», «Հայրենագիտություն», «Հայկական ճարտարապետության պատմություն», «Միջազգային զբոսաշրջային կենտրոնների աշխարհագրություն» «Միջազգային տուրիզմի կենտրոնական աշխարհագրություն», «ՀՀ զբոսաշրջության ռեսուրսները», «Հյուրընկալության հիմունքներ», «Տնտեսագիտություն», «ՏՀՏ-ները մասնագիտական ոլորտում», «Մաթեմատիկայի հիմունքներ» եւ այլ առարկաների քննական տեղեկագրերում համապատասխան դասախոսի փոխարեն ուսանողներին առերեւույթ նշանակել է գնահատականներ կամ դասախոսի կողմից արդեն իսկ նշանակված գնահատականները ջնջելով՝ գնահատականներ է գրառել եւ դասավանդող դասախոսի ստորագրության համար նախատեսված վանդակում դրել է իր ստորագրությունը, այդ կերպ էական վնաս է պատճառվել համալսարանին, քանի որ խախտվել է բնականոն ուսումնական գործընթացը, որի անքակտելի մասն է դասընթացի արդյունքներով ուսանողների գիտելիքների գնահատումը համապատասխան ակադեմիական գիտելիքներ եւ պատրաստվածություն ունեցող դասախոսի կողմից:

Բացի դրանից, էական վնաս է պատճառվել նաեւ ՀՀ կառավարությանը, որը ներդրում է կատարել բարձրագույն ուսումնական հաստատությունում, որում պետք է ապահովվի բնականոն կրթական գործընթացը եւ երաշխավորվի ուսանողների արժանիքահեն առաջադիմությունը:

Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել եւ գործը ուղարկվել է հակակոռուպվիոն դատարան:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանության սուրբ նահատակների հիշատակի օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Սուրբ Պատարագի արարողությանը մասնակցեց Սուրբ Գայանե վանքում: Այդ առիթով հավատացյալների խոնարհումի համար դուրս էր բերվել նաեւ Հայոց Ցեղասպանության սրբոց նահատակաց մասունքարանը:

Պատարագիչն էր Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ? Վազգեն արքեպիսկոպոս Միրզախանյանը:

Իր քարոզում Սրբազան Հայրը, անդրադառնալով 20-րդ դարասկզբի պատմական իրադարձություններին ու Հայոց Ցեղասպանությանը, ի մասնավորի նշեց. «Աստված օրհնեց մեր ժողովրդին եւ վերականգնեց հայոց պետականությունը պատմական Հայաստանի արեւելյան հատվածում, մեր ժողովուրդը կարողացավ պահպանել իր պատմական հողերի այս մի հատվածը, եւ ամոքել իր վերքերը:

Ինչո՞ւ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությունը? մենք դրա մասին պիտի մտածենք, խորհենք, որպեսզի ապագայում կարողանանք խուսափել նման իրավիճակներից եւ թույլ չտանք օտարներին մեր հայրենիքում ենթարկելու մեզ ցեղասպանության... Երբ մենք գնում ենք Ծիծեռնակաբերդ կամ Եռաբլուր, խորհենք, թե ինչ պիտի անեինք, որ չարեցինք եւ ի՞նչ ունենք անելու, որ պիտի անենք՝ գալիքի ակնկալիքով:

Չվախենանք երբեք եւ շարունակենք ապրել Քրիստոսով, որովհետեւ նա հաղթեց ու մենք էլ հաղթելու ենք»:

Վերջում Վազգեն Սրբազանը պատգամեց հավատավոր ժողովրդին խնդրել ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսությունը, որ առավել իմաստությամբ օժտվեն մեր առաջնորդները, որ հայ ժողովուրդը լցվի սիրով, համերաշխությամբ եւ կարողանա պահել ու պահպանել Հայաստան աշխարհը:

ԱՎԱՐՏՎԵՑ «ԱՎՐՈՐԱ»–Ի ՈՒԹ ՏԱՐԻՆ

Մատենադարանում Ժամանակավոր ցուցադրության է ներկայացվել ձեռագրի՝ Ավրորա Մարդիգանյանին նվիրված հուշակոթողի մասին էջը:

Հայոց ցեղասպանության հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին, Մատենադարանում ցուցադրության է ներկայացվել «Մատյան մարդասիրաց» ձեռագիրը: Ցուցադրվող էջը «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության եւ մրցանակի ոգեշնչման աղբյուր, Հայոց ցեղասպանությունը վերապրած Ավրորա Մարդիգանյանին նվիրված հուշակոթողի վավերագրումն է, որն ամփոփում եւ ամբողջացնում է «Մատյան մարդասիրաց» բացառիկ ձեռագիրը: Երեւանում Ավրորա Մարդիգանյանին նվիրված հուշակոթողի բացումը նախատեսվում է մինչեւ տարեվերջ, իսկ մինչ այդ հուշակոթողի էսքիզն արդեն ներկայացված է «Մատյան մարդասիրաց» ձեռագրում, որը կցուցադրվի Մատենադարանի Քարտեզների սրահում մինչեւ 2024 թ. մայիսի 24-ը:

Սա առաջին ձեռագիրն է, որն ստեղծվել է Մատենադարանում 21-րդ դարում՝ պահպանելով հայ մատենագրության ավանդույթները: Այն ներկայացնում է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության տարեգրությունը՝ ընդգծելով «Ավրորայի» հերոսների եւ դափնեկիրների մարդասիրական առաքելությունը: Ձեռագիրը պատմում է ոգեշնչող մարդասիրության, անձնվիրության եւ բացառիկ խիզախության մասին, ինչը ներկայացվում է յուրօրինակ պատկերազարդմամբ: «Ավրորայի» յոթ դափնեկիրների տիտղոսաթերթիկներն ու ամփոփիչ՝ Ավրորա Մարդիգանյանի հուշակոթողին նվիրված էջը նկարազարդել են Մատենադարանում գործող «Ծաղկելու արվեստ» մանրանկարչական ստուդիայի սաները:

Ավրորա Մարդիգանյանին նվիրված երախտագիտության հուշակոթող-քանդակը կխորհրդանշի նրա կյանքը՝ Ցեղասպանությունը վերապրելուց մինչեւ փրկություն: Քանդակի ետին հատվածում կլինեն կանայք գաղթի ճանապարհին եւ Ավրորան՝ նրանց հետ: Իսկ դիմային հատվածում կլինի Մարդիգանյանի կերպարը՝ նրանցից առանձնացած, փրկված եւ լուսավորված:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 21 մարդ տացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԹՈՒՉՔ ՉԻ ԿԱՅԱՑԵԼ

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ «ՕԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ»

Թուրքական Turkish Airlines ավիաընկերությունը Ռուսաստանի դեսպանատան խնդրանքից գրեթե երկու ամիս անց, ռուսերենով հուշող գրողություն ներկայացրել՝ Լատինական Ամերիկա մեկնող ուղեւորների համար: Ռուսական կողմը պահանջել է պարզաբանել կանոնները ռուս զբոսաշրջիկների՝ Ստամբուլից թռիչքների զանգվածային մերժման դեպքերից հետո:

Հուշող գրության մեջ թվարկվում են լրացուցիչ զննման միջոցառումները, որոնք կարող են կիրառվել այն ուղեւորների համար, որոնց թռիչքները ժամանում են Վենեսուելա (Կարակասի օդանավակայան), Մեքսիկա (Մեքսիկա եւ Կանկուն), Կոլումբիա (Բոգոտա), Կուբա (Հավանա) եւ Բրազիլիա (Սան Պաուլո):

Այսպես, Մեխիկո քաղաք մեկնող ուղեւորներին անհրաժեշտ է.

- տարանցիկ վիզա եւ ավիատոմս այլ չվերթի համար տարանցիկ թռիչքի ժամանակ.

- վճարովի հյուրանոց ճանապարհորդության ժամանակահատվածի համար.

- երկկողմանի տոմս, եթե թռիչքի ամսաթվերը վիզայի վավերականության ժամկետի մեջ են այն երկրների համար, որտեղ վիզա է պահանջվում:

Եթե այս կանոններից գոնե մեկը չկատարվի, ուղեւորին կարող են թույլ չտալ թռիչք կատարել: Բոլոր կանոնները տեղադրված են Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (IATA) կայքում:

Մարտի սկզբին Turkish Airlines-ը ուղեւորների համար լրացուցիչ պահանջներ հրապարակեց՝ ռուսերենով եւ բացատրություններով: Ռուսաստանի դեսպանատունը հայտնել է, որ չնայած դիվանագետների հրատապ պահանջներին, այդ պահանջները ռուսերեն չեն հրապարակվել:

Ուղեւորների պահանջները թարմացնելուց հետո Turkish Airlines-ը թռիչքներից հեռացրել է Թուրքիայից Արգենտինա թռչող առնվազն 50 ռուս ուղեւորի: Բուենոս Այրեսում Ռուսաստանի դեսպանատանը հայտնել են, որ խնդիրը կապված է թուրքական ավիափոխադրողի հետ: Turkish Airlines-ում նոր կանոնները բացատրել են Լատինական Ամերիկայի երկրներում ռուսներին ընդունելու կանոնների խստացմամբ: Թուրքիայում Ռուսաստանի դեսպանատունը ռուսներին խորհուրդ է տվել կապ հաստատել ավիաընկերության հետ՝ հարկ եղած դեպքում ավիափոխադրողին դատի տալու համար:

ԹՈՒՐՔԻԱՆ ՊԵՏՔ Է ՃԱՆԱՉԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌԵՐԵՍՎԵԼՈՒ ԿՈՉ

Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցին Թուրքիայում հրդամեռ քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները կրկին կոչ են անում ճանաչել անցյալի վայրագությունները եւ առաջարկում հավասար վերաբերմունք ցուցաբերել բոլոր քաղաքացիների նկատմամբ:

Կազմակերպություններն ու կուսակցությունները Թուրքիային կոչ են անում առերեսվել սեփական պատմության հետ:

Հայտարարության մեջ նշվում է, որ թուրքական պետությունը մինչ օրս չի ճանաչել վայրագություններն ու Հայոց ցեղասպանությունը եւ շարունակում է պատժել նրանց, ովքեր հանդես են գալիս ճանաչման եւ հաշտեցման օգտին:

«Անհրաժեշտ է առերեսվել անցյալի հետ», - Հայոց ցեղասպանության տարելիցին հայտարարել է Ժողովրդավարական տարածաշրջանների կուսակցությունը՝ հավելելով, որ կիսում են հայ ժողովրդի ցավը եւ հարգանքով են հիշում նրանց, ովքեր զոհ են դարձել:

Հայտարարության մեջ կոչ է արվում պահպանել հայկական եկեղեցիները, գերեզմանատեղիները, կրոնական օբյեկտների ազատ օգտագործումը եւ քաղաքացիների հավասարության վրա հիմնված իրավական բարեփոխումները:

«Չափազանց կարեւոր է հրաժարվել ժխտողականությունից եւ յուրաքանչյուր հայի ճանաչել որպես պատմության վկայություն»,- հավելել են նրանք՝ կրկնելով հանգուցյալ հայ մտավորական Հրանտ Դինքի խոսքերը:

Բացի այդ, Հայոց ցեղասպանության տարելիցի վերաբերյալ հայտարարություն է արել նաեւ Դիարբեքիրի փաստաբանների ասոցիացիան (Amed)՝նշելով. «Յուրաքանչյուր ապրիլի 24-ին պետությունն ու մեր աշխատակազմը պայքարի մեջ են մտնում ճշմարտության համար, թե ինչպես մեկնաբանել անցյալի իրադարձությունները», - ընդգծել են նրանք՝ շեշտելով, որ բացահայտ արտահայտվելու համար բախվում են մշտական իրավական խնդիրների:

Ժողովուրդների հավասարության եւ ժողովրդավարության կուսակցությունը (DEM) նույնպես իր համերաշխությունն է հայտնել հայ համայնքին. «Մենք կիսում ենք Հայոց ցեղասպանության վիշտը, որը սկսվել է 1915 թվականի ապրիլի 24-ին մտավորականների տեղահանմամբ, ինչը հանգեցրել է զանգվածային արտաքսման եւ կոտորածի», - հայտարարել են կուսակցությունից՝ ընդգծելով, որ անցյալի հանցագործությունները պետք է ճանաչվեն, որպեսզի ճանապարհ հարթեն դեպի խաղաղություն եւ համախմբված հասարակություն:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ՈՐՈՇՈՒՄ՝ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ Բրիտանիայի խորհրդարանը օրենք է ընդունել, որը թույլ է տալիս տեղական իշխանություններին՝ անօրինական ներգաղթյալներին արտաքսել Ռուանդա, որտեղ նրանք կսպասեն ապաստան տրամադրելու վերաբերյալ՝ Լոնդոնի որոշմանը:

Վարչապետ Ռիշի Սունակը հայտարարել է, որ արտաքսումները կսկսվեն 10-12 շաբաթից:

Կառավարությունը կոմերցիոն մասնավոր թռիչքներ է վարձակալել եւ անձնակազմ տրամադրել փախստականներին Ռուանդա ուղեկցելու համար:

«Ոչ մի եթե, ոչ մի բայց: Այս թռիչքները կիրականացվեն դեպի Ռուանդա», - վստահեցրել է Սունակը:

Հիշեցնենք, որ անցյալ շաբաթ The Times-ը, վկայակոչելով բրիտանական կառավարության փաստաթղթերը, գրել էր, որ Միացյալ Թագավորությունը բանակցություններ է վարում Հայաստանի, Կոտ դ՛Իվուարի, Կոստա Ռիկայի եւ Բոտսվանայի հետ՝ անօրինական միգրանտներ ուղարկելու հետ կապված: Ըստ լուրերի՝նախատեսվում է օգտագործել այն նույն սխեման, որի շուրջ պայմանավորվածություններ են ձեռք բերվել Ռուանդայի հետ:

Հայաստանի ԱԳՆ-ի արձագանքը չուշացավ. «Հայաստանը եւ Մեծ Բրիտանիան ունեն քաղաքական երկխոսության լայն օրակարգ, սակայն կոնկրետ հրապարակման մեջ (The Times) բարձրացված հարցի վերաբերյալ որեւէ առարկայական կամ տեխնիկական բանակցություններ չեն եղել», - պարզաբանեց ՀՀ ԱԳՆ մամուլի քարտուղար Անի Բաղալյանը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՕՐԵՆՔՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովն իր նիստում երկրորդ ընթերցմամբ քննարկել է «Առեւտրի եւ ծառայությունների մասին» եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթը: Այն ներկայացրել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը: Ջեկուցողը նշել է, որ Ազգային ժողովն արդեն ընդունել է փոփոխությունների փաթեթ, որով կարգավորվել է Երեւան քաղաքում շրջիկ առեւտուրը, ամրագրվել են ավագանու լիազորությունները: Մասնավորապես՝ շրջիկ առեւտրի կազմակերպման հետ կապված հարցերը, առեւտրի համար նախատեսված կամ թույլատրելի տարածքները սահմանում է ավագանին:

Փոխնախարարը հիշեցրել է, որ ԱԺ նիստում հարց էր հնչել, թե ինչու՞ է շրջիկ առեւտուրը թույլատրվում միայն Երեւանում, ինչին ի պատասխան՝ նշվել էր, որ «Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքը կկիրարկվի մայրաքաղաքում եւ որոշ ժամանակ անց, հաշվի առնելով արդյունքները, այն կտարածվի նաեւ մյուս համայնքների վրա:

«Պահը հասունացել է եւ որոշակի առումով արդեն ունենք միավորված համայնքներ: Հայաստանում գրանցվում է զբոսաշրջության աճ, կան թիրախային կետեր, որտեղ շրջիկ առեւտուրը կարող է օգտակար լինել: Այս օրենսդրական փաթեթով առաջարկում ենք կարգավորումները կիրառելնաեւ բոլոր համայնքներում», - ասել է Վաչե Տերտերյանը:

Ջեկուցողը հավելել է, որ աշխատանքներն իրականացվելու են առցանց. բոլոր համայնքներն ունեն էլեկտրոնային հարթակներ:

Փոխնախարարը տեղեկացրել է, որ առաջինից երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածում գրավոր առաջարկություններ չեն ստացվել:

Հանձնաժողովը դրական եզրակացություն է տվել օրենսդրական փաթեթին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

109 ՏԱՐԻ ԱՆՑ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Օսմանյան կայսրության կողմից 1915թ. հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը 20-րդ դարասկզբի մեծագույն ոճրագործությունն էր:

Հայ ժողովուրդը, երկրի բարձրաստիճան պաշտոնյաներն ու Հայաստան ժամանած հյուրերը ամեն տարի՝ ապրիլի 24-ին, Ծիծեռնակաբերդի բարձունքում հարգանքի տուրք են մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

Երեկ լրացավ Ցեղասպանության 109-րդ տարելիցը:

Հայոց ցեղասպանությունը կամ Մեծ Եղեռնը Օսմանյան կայսրության իշխանության ղեկին կանգնած երիտթուրքական «Իթթիհաթ վե թերաքի» կուսակցության կազմակերպած ցեղասպանությունն է, որի հետեւանքով 1915-1923 թվականներին զանգվածային տեղահանության է ենթարկվել եւ բնաջնջվել Օսմանյան կայսրության նահանգների, այդ թվում՝ Արեւմտյան Հայաստանի հայ բնակչությունը:

Պայմանականորեն Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր է համարվում 1915 թվականի ապրիլի 24-ը, երբ Կոստանդնուպոլսում, ըստ նախօրոք պատրաստված ցուցակների, ձերբակալվեց մոտ 235 հայազգի մտավորական (հայ գործիչների ձերբակալությունները Կոստանդնուպոլսում շարունակվեցին նաեւ ապրիլի 24-ից հետո):

Լայն իմաստով Հայոց ցեղասպանությունը ներառում է 1894-1923 թվականներին Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի տարբեր վարչակարգերի ծրագրած եւ հայ ժողովրդի դեմ շարունակաբար իրականացրած ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայության ոչնչացմանն ուղղված զանգվածային կոտորածները, էթնիկական զտումները, հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացումը, ինչպես նաեւ ցեղասպանության ժխտումը, պատասխանատվությունից խուսափելու, կատարված հանցագործություններն ու դրանց հետեւանքները լռության մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպես հանցագործության շարունակություն եւ նոր ցեղասպանություններ իրականացնելու խրախուսանք:

Հայերի ցեղասպանությունն իրականացվել է մի քանի փուլով՝ հայ զինվորների զինաթափում, հայերի ընտրողական տեղահանություն սահմանամերձ շրջաններից, Տեղահանության մասին օրենքի ընդունում, հայերի զանգվածային տեղահանություն ու սպանություն: Որոշ պատմաբաններ ցեղասպանական գործողություններ եւ, դրանից ելնելով, Հայոց ցեղասպանության մաս են համարում 1890-ական թվականների Համիդյան կոտորածները, Զմյուռնիայի ջարդերը եւ թուրքական զորքերի գործողություններն Անդրկովկասում 1918-ին:

Հոլոքոստից հետո հայերի ցեղասպանությունը պատմության մեջ իր ուսումնասիրվածությամբ համարվում է երկրորդը:

1915 թվականի մայիսի 24-ի համատեղ հռչակագրում պատմության մեջ առաջին անգամ դաշնակից երկրները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա եւ Ռուսական կայսրություն) հայերի զանգվածային սպանությունները որակեցին իբրեւ «հանցագործություն մարդկության հանդեպ»:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԵՐԳ՝ ՋՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, «Արամ Խաչատրյան» համերգասրահում ներկա է գտնվել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված համերգին:

Ապրիլի 23-ին ժամը 23:59-ին, հնչել է Վ.Ա. Մոցարտի «Ռեքվիեմ» ստեղծագործությունը՝ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ եւ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի մասնակցությամբ: «Ռեքվիեմ»-ը ղեկավարել է հրավիրյալ անվանի դիրիժոր Ջորջ Փեհլիվանյանը:

ՇՎԵԴԻԱՅՈՒՄ 12–ՐԴ ԴԱՐԻ ԴԱՄԲԱՐԱՆ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Վերջերս շվեդ հնագետները հնագիտական պեղումների ժամանակ 12-րդ դարի գերեզման եւ այնտեղ թաղված գանձեր են հայտնաբերել: Յոնչյոպինգ շրջանի թանգարանը հայտնագործության մասին հայտնել է մարտի 27-ի՝ շվեդերենից անգլերեն թարգմանված մամուլի հաղորդագրության մեջ: Հայտնագործությունն արվել է շվեդական կղզու Վիսինգսյո քաղաքի հին եկեղեցու գերեզմանի պեղումների ժամանակ: Մետաղադրամները հայտնաբերվել են մի տղամարդու գերեզմանում, որն, ըստ փորձագետների, մահվան պահին եղել է 20-25 տարեկան: Մետաղի կտորները պատրաստվել են 1150-1180 թվականներին:

Ընդհանուր առմամբ հայտնաբերվել են 170 արծաթի բրաքթեաթներ՝ մի կողմից դրոշմված հարթ մետաղադրամներ: Միեւնույն ժամանակ, հնագետները տարակուսել են այն փաստից, որ մետաղադրամները հայտնաբերվել են քրիստոնեական գերեզմանում: Վաղ միջնադարում քրիստոնյաների շրջանում ընդունված չէր մարդուն թաղել մետաղադրամներով:

«Քրիստոնեական գերեզմաններում գտածոներ հազվադեպ են լինում, այս սովորույթը գալիս է նախապատմական ժամանակներից, եւ դա առանձնահատուկ է դարձնում Վիզինգսյոներին», - բացատրել են փորձագետները:

3000 ՀԱՆԴԻՍԱՏԵՄ՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԿՈՒՄ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ 2024 թվականի մարտ-ապրիլ ամիսներին հայտարարված թատերական երկամսյակի ժամանակահատվածում կազմակերպված ներկայացումները դիտել են շուրջ 3000 հանդիսատես:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ 2024 թվականի մարտի 10-ից մինչեւ ապրիլի 8-ն ընկած ժամանակահատվածում Գեղարքունիքի Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնում իրենց լավագույն կատարումներով հանդես են եկել Երեւանի Մնջախաղի, Երեւանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի, Արտաշատի Ամո Խարազյանի անվան, Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան, Գյումրու Վարդան Աճեմյանի անվան, Երեւանի Հովհաննես Թումանյանի անվան, Երեւանի Խամաճիկների պետական, Երեւանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնների դերասանները՝ իրենց խաղացանկերով:

«Թատերական երկամսյակի» վերջին՝ 9-րդ ներկայացմամբ ապրիլի 22-ին հանդես են եկել Երեւանի Սոս Սարգսյանի անվան համազգային պետական թատրոնի դերասանները՝ Պարույր Սեւակի՝ « Մարդը ափի մեջ» պոեզիայի բեմադրությամբ, որը նվիրված էր մեծանուն գրողի 100 -ամյա հոբելյանին:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Բուլղարիայի Վառնա քաղաքում բացվել է բուլղարա-հայկական մշակութային եւ տեղեկատվական կենտրոն, որը վարելու է միջոցառումների օրացույց՝ ներառելով հայ համայնքին առնչվող բոլոր կազմակերպությունների եւ միությունների գործունեությունը:

Կենտրոնն օրհնել է Տեր Դիրայր քահանա Հադավյանն, ով Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Բուլղարիայի եւ Ռումինիայի ներկայացուցիչ Տաթեւ արքեպիսկոպոս Ակոպյանի ներկայացուցիչն է:

Նորաբաց կենտրոնը կանցկացնի թրեյնինգներ, դասախոսություններ, շնորհանդեսներ եւ հանդիպումներ հայ մշակույթի, արվեստի, կրթության եւ գիտության հետ առնչվող անձնավորությունների հետ եւ կզարգացնի բուլղարացի եւ հայ ժողովուրդների հարաբերությունները:

Մշակութային կենտրոնի բացմանը ներկա են եղել Բուլղարիայում Հայաստանի դեսպան Արմեն Եդիգարյանը, Վառնայի քաղաքապետ Բլագոմիր Կոցեւը եւ նրա տեղակալներ Իլյա Կոեւը, Խրիստո Ռաֆաիլովը եւ Իլիա Պոպովը, Վառնայի քաղաքապետարանի քարտուղար Սիլվա Կրիկորյանը, Եվրախորհրդարանի պատգամավոր Էմիլ Ռադեւը եւ Վառնայի քաղաքային խորհրդի նախագահ Խրիստո Դիմիտրովը:

«ԱՐՍԵՆԱԼ» 5 – «ՉԵԼՍԻ» 0

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնության 29-րդ տուրի խաղում «Արսենալն» ընդունեց «Չելսիին» եւ հաղթեց 5:0 հաշվով:

Դուբլի հեղինակ դարձան անգլիացի պաշտպան Բեն Ուայթն ու գերմանացի կիսապաշտպան Կայ Հավերցը: Աչքի ընկավ նաեւ բելգիացի հարձակվող Լեանդրո Տրոսարդը:

34 խաղից հետո «Արսենալը» 77 միավորով գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Երկրորդ տեղում ընթացող «Լիվերպուլը» (33 խաղ) ունի 74 միավոր, երրորդ տեղում գտնվող «Մանչեսթեր Սիթի» (32 խաղ)՝ 73 միավոր: «Չելսին» (32 խաղ) 9-րդն է՝ 47 միավոր:

ԿՄԱՄՆԱԿՑԵՆ ԽԱՂԵՐԻՆ

2024թ. Փարիզի Օլիմպիական խաղերում ծանրամարտի Հայաստանի հավաքականը կներկայացնեն 89 կգ քաշային Անդրանիկ Կարապետյանը, 102 կգ քաշային Գարիկ Կարապետյանը եւ գերծանր քաշային Վարազդատ Լալայանը:

Ծանրամարտի միջազգային ֆեդերացիան ներկայացրել է օլիմպիական ուղեգրեր նվաճած ծանրորդների ցուցակը:

Բահրեյնը ծանրամարտի օլիմպիական մրցաշարում կներկայացնի Հայաստանի հավաքականի նախկին անդամ, գերծանր քաշային Գոռ Մինասյանը:

● Ապրիլի 26-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Մեծ լռություն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՐՑ. Ավագանին կարո՞ղ է բողոքարկել համայնքի ղեկավարի որոշումները, եւ ո՞ր դեպքում:

Նոնա Ալոյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը:

Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որեւէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չընդունված:

ՀՀ ՏԿԵՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԳՆԱՃ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է ԿԲ-ն նոպատակադրում 12-ամսյա եւ ոչ թե միջին գնաճ:

Հակոբ Թովմասյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ենթադրենք՝ ԿԲ-ն նպատակադրում է միջին գնաճը, այսինքն՝ T+1 թվականի հունվար-դեկտեմբերը՝ նախորդ՝ T տարվա նույն ժամանակահատվածի միջին գների նկատմամբ: T-ն այստեղ ընթացիկ տարին է, (T+1)-ը՝ հաջորդ, (T-1)-ը՝ նախորդ: Միջին գնաճի հաշվարկման մեթոդաբանությունն այնպիսինն է, որ եթե T թվականի հունվարին արձանագրված լինի որեւէ գնային շոկ (օրինակ՝ հացահատիկի գների անսպասելի մեծ աճ միջազգային շուկայում) եւ, հետեւաբար, բարձր գնաճ, ապա այն 2 տարի՝ T թվականի հունվարից մինչեւ T+1 թվականի դեկտեմբեր ամիսը, արտացոլվելու է միջին գնաճի ցուցանիշում: Շոկի ազդեցության աստիճանաբար մարումից հետո գնաճը կայունանում է, սակայն միջին գնաճի ցուցանիշը բարձր է մնում: ԿԲ-ն կանխատեսում է բարձր միջին գնաճ եւ բարձրացնում տոկոսադրույքները: Այս պարագայում, անցյալի իներցիայից ելնելով, գների սպասվելիք մակարդակն ավելի բարձր կլինի, թեեւ գների սպասվելիք մակարդակն արդեն կարգավորված է: ԿԲ արձագանքն այդ պարագայում ոչ համարժեք է, ընկալելի չէ եւ կարող է գնաճային սպասումների ոչ ճիշտ ազդակներ ձեւավորել: Կստացվի, որ ԿԲ-ն, ապագայի գնաճային միջավայրին արձագանքելու փոխարեն, արձագանքում է նախկինում գրանցված գնաճին:

ՀՀ ԿԲ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 12-ամսյա գնաճի պարագայում այդ շոկը գնաճի ցուցանիշում արտացոլվում է միայն 12 -ամիս՝ T+1 թվականի հունվարը, գնաճի 12-ամսյա կանխատեսումներն ավելի ճիշտ են արտացոլում գնաճային միջավայրը, հետեւաբար ԿԲ արձագանքը համարժեք է իրավիճակին՝ թե՛ տոկոսադրույքների ուղղորդման, թե՛ սպասումների ձեւավորման տեսակետից:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 5 +18 + 22
Կոտայքի լեռներ	+ 2 + 5 +17 + 19
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +22 + 24
Գեղարքունիք	+ 2 + 5 +14 + 18
Լոռի	+ 3 + 8 +20 + 22
Տավուշ	+ 8 + 12 +23 + 27
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +15 + 19
Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 12 + 22+ 26

Արարատ	+12 + 14 +27 + 29
Արմավիր	+10 + 12 +26 + 28
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 4 +16 + 19
Վայոց ձորի նախալեռներ	+11 + 13 +26 + 29
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11 +25 + 27
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +18 + 20
ԼՂՀ	+ 2 + 6 +17 + 21
Երեւան	+ 18+ 20 + 26 + 28

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ՝ ապրիլի 24-ին, Մոսկվայի Սուրբ Պայծառակերպության Մայր Տաճարում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի հանդիսապետությամբ պատարագ է մատուցվել՝ նվիրված Հայոց ցեղասպանության 109-րդ տարելիցին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.4.2024**
Հասցեն՝ Գերաբերունիքի փող. ք. Վարդենիս, վ. Դանիելյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*